




Z.102



LNG 1907



թ - 279.

ԾՐԱԳԻՐ  
ԵՒ

(76)

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԳԱՐԱԳԱՐԱԿՑԱԿԱՆ

ՍԻԼԵԲԵԱՆ

ՀՀ


(ԱՐԺԵՆՈ-ՄԵԼԻԹԵՆԱԿԱՆ ՄԻԱՅԵԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՔԻՆ)

2004

L01S01

1907

2012



9(47925)

Գ-24

ՊԱՐՄԵՆԻ  
ՊԱՐՄԵՆԻ

ԺԱՌԱՋՈՒՅԹ  
ԺԱՌԱՋՈՒՅԹ

ԵՐԿՐԻ ԽՕՍՔ

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Ըստ մեզ, Հայկական դատը կամ, աւելի մաս-  
նաբերելով և ճշգելով զայն, Տաճկահայ դատը  
ուղղակի և էականապէս քաղաքական մի դատ է,  
այսինքն որ նա իր գրական լուծման և իրագործ-  
ման մէջ ուրիշ բան չունի անմիջականապէս տա-  
լու հայութեան, բայց եթէ մի ազգի յարատեւ-  
գոյութեան ու անհատականութեան առաջին ան-  
հրաժեշտ պայմանը եղող սեփական քաղաքական  
իշխանութիւնը, որմէ նա վաղուց զրկուած է  
պատմական հանգամանքներու բերմամբ։ Ուրիշ  
խօսքով, և աւելի բացորոշ գնելով խնդիրը, Հայ-  
կական դատը ուրիշ կերպով չպէտք է հասկանալ,  
բայց եթէ Տաճկական Հայաստանի ազատութիւնը  
Տաճկական իշխանութեան լուծէն և զայն գնելը  
ինքնուրոյն, անկախ, սեփական հայկական իշխա-  
նութեան տակ։ Դեռ անմիջական խնդիր չէ գիտ-  
նալ թէ այդ իշխանութիւնը ի՞նչ ձեւի տակ  
պէտք է արտայայտուի այդ դատի յաջող լուծ-  
ման պարագային, թէ արդեօք այդ իշխանու-  
թիւնը ներկայացնող կառավարութիւնը պէտք է  
միապետական լինի թէ հանրապետական, ոչ,  
այս ձեւերը երկրորդական են գեռ։ մեզ համար  
անմիջական խնդիրը, որ պէտք է լուծուի, նոյն  
այդ ազատութիւնն է օտարի լուծէն և ամփոփ-  
ուիլը հայկական ազատ հայրենիքի մէջ — Հայա-


տանի մէջ — անկախ և ինքնուրոյն Հայ-ազգային իշխանութեան տակ, ինչ ձեւով ալ լինի սա արտայայտուած:

Այդպէս է, ըստ մեզ, հայկական դատի իմաստը. այդպէս պէտք է, կը կարծենք, հասկանալ զայն և ոչ ուրիշ կերպ: Այդպէս է նա պատմականօրէն: Այդպէս է նա և այժմս ազգային հոգեբանութեան մէջ և ոչ ուրիշ կերպ: Չեսք բերելով կորսուած բազարական իշխանութիւնը՝ Հայ ազգը տէր պիտի դառնայ ինքնիրեն և միահեծան տնօրինը իր բազգին: Նաեւ, բացի ադկէ, պիտի կատարէ այդու ազգային բարոյականի մի գերազանցապէս վսեմ զործ — նա պիտի խզէ ստրկական կապերը, որոնցմով կապուած է նա դարերէ հետէ իր տիրապետողին, և պիտի վերըստանայ ազգային երջանիկ հպարտութիւնը: Նա, մէկ խօսքով, պիտի լինի մի անձնաւորութիւն, այսինքն ինչպէս մէկը՝ որ գերիշխան տէր է իր կամքին և իր շարժումներուն: Եւ այս է, ըստ մեզ, գերազոյն բարիքը, որուն մի ազգ պէտք է ձգտի ամեն բանէ առաջ:

Այսպէս չհամացուեցաւ, սակայն, գերազդարար, հայկական դատը, հէնց սկիզբէն, այն յեղափոխական խմբակցութիւններէն, որոնք կազմակերպուեցան՝ կոչում տալով իրենց գործնական լուծում բերելու այդ դատին: Եթէ եղաւ իսկ մտքերու մէջ այդ հասկացողութիւնը՝ կողմնակի դաղափարներ չուշցան գալու՝ մթագնելու, նըսեմացնելու և, ոմանց մէջ, նոյն իսկ իսպառ ուշնչացնելու դայն: Յանուն զիտական հոչակուած վարդապետութիւնը կազմակայն, զիտակա-

նութիւնը կը մնայ միշտ ապացուցանելի, հայկական դատը — այնքա՞ն պարզ և յստակ պատմութեան և ժողովրդային առողջամտութեան առաջ — մերկացաւ իր զուտ բաղաքական զգեստէն և հագուեցաւ տնտեսական զգեստ նոյն այդ յեղափոխական քարոզիչներէն: Տնտեսականով սկան ամեն ինչ բացատրել և տնտեսականով ալ վերջացնել. բազարականը վտարուեցաւ. յետին պլանի վերայ, մինչեւ աննշմարելի լինելու աստիճան . . . : Սա մի մոլար ծայրայեղութիւն էր, որուն մէջ հաճոյացաւ երկար ժամանակ հասրակական-յեղափոխական միտքը:

Սօցիալիզմը, սկզբնապէս սոսկ դասակարգային մի խնդիր, որքան ալ համակրութիւն ներշնչէ իր համամարդկային իտէալներով, միանգամայն օտար էր հայկական դատին, որուն նա եկաւ խառնուեցաւ, չգիտենք ինչու, որպէս կողմնակի հոսող մի պղտոր առու: որ գայ ու խառնուի մաքուր, յստակ աղբիւրի ջրին: Սա խոշորագոյն սխալներէն էր, զոր զործեց յեղափոխական միտքը նա գոյութեան ոչ մի իրաւունք չունէր այն զործին մէջ, որ, ինչպէս ասացինք, էականապէս բազարական էր և համազգային և որ ամեննեին չէր կարող հանդուրժել որ և է մասնաւոր, դասակարգային կամ նոյն իսկ համամարդկային բարող: Եւ զորա հետեւանքները տուժեց ինքը ազգութիւնը և նորա աղատութեան անունով ձեռնարկուած զործը նա հէնց սկիզբէն խախտեց յեղափոխական շարժումը իր տեղէն և զայն շեղեց այն գծէն, որով նա պէտք է ընթանար: Ենորհիւ ուրիշ բազմաթիւ մանր ու խոշոր սխալներու,



այդ շեղումը, այնուհետև, զնալով առելի ու առելի շեշտուեցաւ, մինչ այն աստիճան որ այսօր այլ եւս յայտնի չէ թէ ո՞րն է եղած նորս սկըզբնական մեկնման կէտը և որը՝ ժամանմանը:

Այս կարծ խօսքերու մէջ մենք ամենեւին դիտաւորութիւն չունինք պատմական ըննագատութիւն ներկայացնելու յեղափոխական մօտիկ անցեալի գործունէութեան մասին և թուելու մի առ մի գործուած բոլոր մանր ու խոշոր սրխալները, այդ շատ հեռուն կը տանէլ մեզ: Մենք կ'ուզենք միայն մատնանիշ անել անոնցմէ մէկ երկու կարեւորագոյններու վրայ, որոնք, որպէս սկզբնական մեղքեր, ինքնին բաւեցին հէնց սկիզբէն կատարելու այդ ողբալի շեղումը:

Միւս ամենամեծ սխալը, զոր թոյլ առաւ իրեն գործել Յեղափոխութիւնը, չբաժնուելով այս կէտի վրայ, պէտք է խոստվանիլ, ազգութեան գրեթէ ընդհանրութենէն, որ մեզակից է անոր — այդ, ըստ մեզ, օտարի օգնութեան ակնկալութիւնն էր, որուն ակնկառոյց՝ Յեղափոխութիւնը երբէ՛ք լլջօրէն խնդիր չարաւ իրեն սեփական ոյժ գոյացնելու անհրաժեշտութիւնը:

Եւրոպական տէրութեանց հաւանական միջամբութիւնը հայկական գատի լուծման մէջ՝ եղան մի կատարեալ վարդապետութիւն, որ վերջի վերջոյ գարձաւ մի նպատակ, որուն զոհ տրուեցան հաշիւ ու համար չունեցող անձեր, գրամ, ժամանակ և ճիղ...: Յեղափոխութիւնը փոխանակ ձգտելու ապատամբական ոյժ մթերելու, ոյժ, որ ըստ մեզ, միա՛կ լուծող ֆակտորը պէտք է լինէր այդ գատին, ինքզինը մաշեց անվերջ աննպա-

տակ գործողութեանց մէջ, հեռանկար ունենալով ոչ սեփական ոյժով յաղթական կանգնիլը թշնամւոյն վերայ, այլ նոյն այդ եւրոպական առեղծուածյին միջամտութիւնը իրականացնելը: Միջամտութիւնը չիրականացաւ: Իրականացան միայն, աւա՛զ, չարիքներ և չարիքներ . . .:

Կը կարծենք թէ, եթէ գործուած սխալները կարող են արդարանալ հասարակական-բազաբարկան գործերու մասին եղած սկզբնական տգիտութեան և անփորձութեան առաջ, արդարացում չէ կարող լինել, սակայն, եթէ գործող միտքը չը գիտնայ ինքն իր վրայ անդրագառնալ, ամփոփուիլ, և շարունակէ մնալ կարծըրացած միեւնոյն սխալներուն մէջ: Անշուշտ, կարելի չէ պնդել թէ կարելի է միանգամ ընդ միշտ ազատուիլ սխալներու տիրապետութենէն, երբ մանաւանդ խընդիրը բարդ, կնճռոտ հասարակական է. ոչ, ի հարկէ, այդ կը լինէր աններելի, անմիտ յաւակնուութիւն: Բայց կարելի է, և պարտաւորիչ է, կը կարծենք, հեռու և մօտ անցեալի խրատներով լի պատմութենէն օգտուելով՝ յետ կենալ զոնէ այն խոչոր, այն յայտնի և աշը ծակող սխալներէն, որոնք այլ եւս ակներեւ են և տարրական իմացականութեան խակ ըմբռնելի:

Եթէ յեղափոխութիւնը, հակառակ վատնուած բարոյական և նիւթական ահագին ոյժին, չտուած հայ ազգին այն, ինչ որ նորա գարաւոր բաղձանքն ու իրաւունքն էր, այդ, մեր կարծիքով, ոչ այն պատճառով որ նա անկարող էր սեփական ոյժերով գէմ առ գէմ կանգնիլ թշնամւոյն, այլ պարզապէս այն պատճառով որ նա ենթարկուե-

ցաւ գաղափարային ցրուման, որուն արամարտնօրէն հետեւեցաւ ուժերու ցըսում։ Նա հետապնդեց աւելի սկզբունքային, գտանանրի, վարդապետական խնդիրներ քան մէժոդ և տակտիկա՝ գործ գրուելու մի զուտ քաղաքական-ազգային կռուի մէջ, զոր նա ունէր մղելու այնպիսի մի թշնամւոյ գէմ։ որ կը ներկայանար իրեն ամփոփ և կեդրոնացած ուժերով։

Արդ, ամեն ուրիշ պայման հաւասար ընդունելով, երբ երկու կոռողներէն մէկը կը ցըսէ իր ուժերը, փոխանակ ամփոփելու, կեդրոնացնելու զայնս, նա ճակատագրականօրէն գատուպարտուած է պարտութեան։ Այդպէս եղանք մենք մեր թշնամւոյ գէմ։ Ցըսւեցինք մեր ուժերը, մինչզեռինքը, թշնամին, գործեց մեզ գէմ միշտ կեդրոնացած, միշտ ամփոփ, միշտ որպէս մի։ Այդ պատճառով ալ մենք պարտուեցանք։

Կը մնա՞նք արդեօք միշտ պարտուած։ Կը լենի՞նք հարկադրուած միանգամ ընդ միշտ հըրաժեշտ տալու գեղեցիկ յոյսերուն, փայփայուած երազներուն . . . : — Ո՛չ, ի հարկէ։

Մենք չենք անոնցմէ, որոնք յուսահատ են ազգային վերանորոգման։ Մենք չենք անոնցմէ, որոնք անհաւատ են սեփական ուժի կարելիութեան և սեւեռած կը մնան եւրոպական միջամբ տութեան հրապուրիչ, բայց և մեղկացուցիչ, զաղափարի վրայ։ Մենք, ընդհակառակը, կը հաւատանք որ կարելի՛ է ազգի փրկութիւնը և որ այդ փրկութիւնը ուրիշ տեղ չի գտնուիր, բայց եթէ նոյն իսկ մեր սեփական ձեռքերու մէջ, — միայն թէ գիտնանք ամփոփուիլ, կեդրոնանալ մեր մէջ

գաղափարային և թէ՛ բարոյական ու նիւթական ուժերու արտայայտութեանց մէջ։ Մենք կը հաւատանք որ համեմատաբար աւելի փոքր ուժերով կարս' զ ենք շահիլ մեր գտառը, — միայն թէ չը ցըսւենք այդ ուժերը։ Դնե՞նք նախ նպատակը այնպէս, ինչպէս նա է և պէ՛տը է լինի, այսինքն որ նա զուտ քաղաքական է և ազգային, որ նա ուրիշ իմաստ չունի, բայց եթէ օտարի լուծէն, ներկայ գէպքի մէջ, տաճկական տիրապետութեան լուծէն, ազատելլը հայ հայրենիքը։ Զխառնե՞նք այդ ընդհանուր ազգային նպատակին ո՛ր և է օտար վարդապետութիւն, որ մեզ կարող է շեղել մեր հետեւելիք գծէն և ցըսւել մեր ուժերը, ինչպէս եղաւ մինչ այսօր։ Դնե՞նք ապա մեր բոլոր յոյսը, մեր բոլոր հաւատքը մեր սեփական ուժի վրայ, մեր սեփական միջոցներու վրայ։ Պատրաստուի՞նք որքան կարելի է ուժիկ, որքան կարելի է ամուր։ Հասկանա՞նք միմեանց որքան կարելի է մատիկ — և մենք կը յուսանք որ կարող կը լինինք իրագործել Մեծ նպատակը։

Այս յոյսերով ու հաւատքով՝ Գաղափարակցական Միութիւնս, կազմուած նախկին Արմենական և Միութենական ինքնուրոյն մարմիններէն, համարձակ կ'ընդգրկէ ապստամբական կոիւը աւանդական թշնամոյն գէմ, տալու համար Ազգին այն ազատութիւնը, որուն նա դարերէ հետէ կը բաղձայ և որուն համար նա տուաւ զոհեր աւելի, որքան զուցէ հարկաւոր չէր . . . : Իր գրօշին վրայ Միութիւնս չունի գրած ուրիշ նպատակ, բայց եթէ Հայրենիքի ազատութիւնը՝ օտարի ստրկական լուծէն։ Իրեն համար ուրիշ ճանապարհ չունի

զծած, բայց եթէ զինեալ և ամուր պատրաստը-  
ւած ապստամբական ճանապարհը, կրթնած միայն  
սեփական ուժին: Իրեն ուրիշ նեցուկ և զօրա-  
վիդն չունի, բայց եթէ անխտիր բոլոր ազգին  
իրեն մատակարարած աղնիւ, ուղիղ, անձնուէր և  
պարտաճանաչ ընտրեալները, բոլոր անկեղծ հայ-  
րենասէրները, բոլոր անոնք, որոնք չեն մոլորուած  
այս կամ այն օտարուաի հասկացողութիւններով,  
որոնք չեն կուրացած կուսակցական և անջատա-  
կան մոլեռանդութեամբ և որոնք ուրիշ բան չու-  
նին ինկատի, բայց միայն և մի՛միայն բազմա-  
չարչար Հայրենիքի ազատութիւնը . . . :

Այս կերպով մենք կը գործենք ասպարէզի վե-  
րայ, յուսալից և եռանդուն:

Այս կերպով և կը յուսանք թէ անպատճառ  
կը յաղթենք թշնամւոյն:

Ք.

3 Դեկտեմբեր 1907.



## ԾՐԱԳԻՐ

### ԳԱՂԱՓԱՐԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

#### ՆՊԱՏԱԿ

Միութեանս նպատակն է զինու զօրութեամբ  
ազատել Օսմանեան լուծէն Օսմանեան Հայաստանը  
և կազմել անկէ բազարականապէս ինքնուրոյն,  
անկախ և ազատ Հայկական իշխանութիւն մը:

#### ՄԻԶՈՅ

Միութիւնս իր առաջադրած նպատակը իրա-  
կանացնելու համար կ'ընդունի և ի գործ կը դնէ,  
որպէս միջոց՝ նախօրօք և երկարօրէն պատրաս-  
տուած զինեալ ապստամբութիւնը:

Ապստամբական ոյժի պատրաստութիւնը կեն-  
թադրէ բազմաթիւ գրական պայմաններ, որոնց  
գլխաւորները հետեւեալներն են.

ա) Ներքին գաղոնի պրօպականդայի միջոցով  
փնտուել գտնել և ի մի հաւաքել, առանց դասա-  
կարգային խորութեան, բոլոր հայ անհատները,  
խումբերը կամ խմբակցութիւնները, որոնք վե-  
րոգրեալ նպատակի և միջոցի վերայ կը դաւանին  
միատեսակ համոզում:

բ) Միութեանս անդամակցելու կոչուած տար-  
րերը կազմակերպել համաձայն գաղտնապահու-  
թեան և կարգապահութեան ամենախստ սկզբ-  
րունքներուն:

գ) Զէնք և դրամ հայթայթել:

դ) Որքան կարելի է մօտիկ և գիտական ճշշ-  
գրմիտ ուսումնասիրութիւններ կատարել թշնամի

(2)

կառավարութեան ամեն կարգի ոյժելու (գրամական, զինւորական ելն.) ինչպէս նաև ապատամբական վայրերու, դիրքերու, ճանապարհներու և այլ նոյնօրինակ պայմաններու մասին :

Ե) Որբան կարելի է զդուշանալ վաղաժամ, աննպատակ և գործը վիճեցնող շարժումներէ, ցոյցերէ և պրօվօկացիաներէ (գրգիռ), և առ հասարակ ամեն արարքներէ, որոնք կարող են վնասել փրկութեան գործին :

Ղ) Ապատամբական ոյժի պատրաստութիւնը անհրաժեշտ պէտք ունենալով որբան կարելի է մեծ խաղաղութեան, պէտք է աշխատիլ ամեն կերպ պահպանել այդ խաղաղութիւնը, առանց որի կարելի չէ ոչ մի լուրջ և արդիւնաւոր յեղափոխական աշխատանք : Ի մասնաւորի, անհրաժեշտ է որբան կարելի է օրինաւոր և նոյնիսկ բարեկամական յարաբերութիւններ ունենալ շրջապատող լոլոր ցեղերու հետ, որպէսզի, եթէ կարելի չէ յուսալ անոնցմէ որ և է մէկի օգնութեան ապատամբական կռուի պարագային, զոնէ թշնամութեան չհանգիպելով՝ ապատամբական գործը չդժուարանայ իր կանոնաւոր գնացքի մէջ :

Ե) Գալունապահութեան և կարելիութեան սահմանների մէջ մնալով՝ գրաւոր և բանաւոր պրօպագանդա ընել կազմակերպութեան շարքերու մէջ, վառ պահել հայրենասիրական ոգին, արձարծել և ամրացնել ինքնապաշտպանութեան զգացումը, անձնուիրութեան և կամաւորութեան ոգին և առհասարակ շեշտել բաղաքացիական առաքինութեան և պարտաճանաչութեան բարձր զգացումներու վրայ:

(3)

Ը) Մահուան պատժի ենթարկել մատնութիւնը եւ գաւաճանութիւնը :

### ԿԾԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Ամեն Հայ՝ որ կը ներկայացնէ անաղարտ բարոյական, կարող է անդամակցիլ Միութեանս, եթէ լրացնէ հետեւեալ երեք հիմնական պայմանները, որը են.

ա.) Անպայման հպատակիլ Միութեանս բոլոր կանոններուն :

բ.) Կանոնաւորապէս վճարել կաղմակերպութեան գանձին կանոնաւորապէս որոշուած անդամակցական տուրքը :

գ.) Ունենալ սեփական զէնք կամ փոխարէն (պէտէլ) հասուցանել զէնքի համար՝ որոշուած գինը : Զերծ կարող են լինել այս պարտականութենէն միայն անոնք, որոնք բացարձակապէս անկարող լինելով վճարել որոշուած տուրքը, անոր փոխարէն սակայն կը մատակարարեն գնահատելի ծառայութիւններ :

2. Բոլոր անոնք, որոնք կը լրացնեն վերոդըրեալ երեք պայմանները, կը համարուին Գործօն կամ Բորն անդամներ, որոնց ամբողջութիւնը կաղմակերպուած ստորեւ վայր բերուած Վարչական-կանոնագրական հիմնական սկզբունքներու վրայ, կը կազմէ Գաղափարակցական Միութիւնը :

3. Բոլոր անոնք, որոնք չենթարկուելով հանդերձ Միութեանս կանոններուն՝ կը նպաստեն, սակայն, յօժարակամ անոր զարգացմանն ու զօ-

ըութեանը թէ՛ բարոյապէս իրենց խորհուրդներով եւ թէ՛ նիւթապէս՝ զճարելով որոշուած անդամակցական առւրբը, կը համարուին համակիր կամ քաջալերող անդամներ:

Համակիրներու շարքին մէջ, եւ մի՛միայն համակիրներու շարքին մէջ, կարող են մուտ գտնել նաեւ իդական սեռին պատկանող անհատներ:

### Վ. Ա. Պ. Զ. Ա. Կ. Ա. Ն. Դ. Բ. Ո. Ւ. Թ. Ի. Ի. Ե.

Միութեանս ամբողջ վարչական մեխանիզմը կեցած է Ընդհանուր Պատգամաւորական ժողովի, կեդրոնական վարչութեան, Երջանային կամ Նահանգային վարչութեանց, Մասնաճիւղային վարչութեանց եւ Խմբապետներու վրայ: Սոքա կը վարեն Միութեանս բոլոր ներքին եւ արտօքին գործերը, մնալով իւրաքանչիւրը իւր սահմաններու մէջ: Այդ սահմանները գծուած են ներքին Ընդհանուր Կանոնագրութեան մէջ:

Կազմակերպութեանս իւրաքանչիւր շրջանակը կ'ունենայ իրեն յատուկ կանոնագրութիւնը, կազմուած տեղական պահանջներու համեմատ, որով կը գծուին նորա զանազան մասերի պարտուց եւ իրաւանց սահմանները, ինչպէս նաև Երջանային վարչութեանց ընտրութեան եղանակը, ըստ տեղական հանգամանքներու:

Ներքին Կանոնագրերը հակառակ լինելու չեն Ծրագրի հիմնական կետերուն: Իւրաքանչիւր Երջանակ իւր գրամական հասոյթի 30 0/0 ը կ'ուղարկէ կեդրոնական Գանձտրանը:

### ՆԵՐՔԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ

### ԳԱՂԱՓԱՐԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

#### Գ. Լ. Ո. Ւ. Ա.

#### ՀԱՅՈՐԴԱԿԵԼՈՐՔԻՉԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Յօդ. 1.— Ամեն Հայ, որ լրացուցած է իր համակի 17 թգ տարին և կը ներկայացնէ անաղարտ բարոյական, կարող է անդամակցիլ Միութեանս՝ եթէ կը գտաւանի նորա ծրագրերը, կ'ենթարկուի նորա կանոնագրին և յանձն կ'առնու կատարել բոլոր այն պարտականութիւնները, զորս Միութիւնը կը դնէ նորա վերայ, համաձայն իր ծրագրին, իր կանոնագրին և գործի պահանջին:

Յօդ. 2.— Որպէսզի մէկը ընդունուի Միութեանս շարքերուն մէջ, անհրաժեշտ է որ նա առաջարկուի ծանօթ անդամի մը կողմանէ և ստանայ իւր պատկանելիք Խմբի անդամներու մեծամասնութեան հաւանութիւնը:



#### Գ. Լ. Ո. Ւ. Բ.

#### Վարչական հիմնական կազմ

Յօդ. 3.— Խումբ. — 8-15 անդամներ միմեանց հետ միանալով՝ կը կազմեն մի խումբ:

Յօդ. 4.— Խմբի թիւը չէ կարող լինել նուազքան 8: Վերջին պարագային, այսինքն, եթէ այդ

թիւը 8 էն վար լինի՝ անդամագրուած անհատները կը միանան գրացի Խմբի կամ Մասնաճիւղի հետ, մինչեւ որ լրացնելով պահանջուած օրինական թիւը՝ կազմեն ինքնուրոյն խումբ:

Յօդ. 5.— Մասնանիւլ. — Մէկէ աւելի խումբեր միմեանց հետ միանալով՝ կը կազմեն մի մասնաճիւղ, պայմանաւ սակայն որ խումբերու թիւը 3 էն վար չ'իջնէ: Վերջին պարագային, նորա կը միանան գրացի Մասնաճիւղի հետ, մինչեւ որ լրացնելով պահանջուած օրինական թիւը՝ կազմեն ինքնուրոյն Մասնաճիւղ:

Յօդ. 6.— Նահանգային ցըշանակ. — Մէկէ աւելի Մասնաճիւղեր միմեանց հետ միանալով՝ կը կազմեն մի նահանգային Շրջանակ, պայմանաւ սակայն որ Մասնաճիւղերու թիւը 3 էն վար չ'իջնէ. վերջին պարագային, նորա կը միանան գրացի նահանգային Շրջանակին հետ, մինչեւ որ լրացնելով պահանջուած օրինական թիւը՝ կազմեն ինքնուրոյն շրջանակ:

Յօդ. 7.— Ընդհանուր Պատգամաւորական ժողովին և կեդրոնական վարչութեան իրաւասութեան կը պատկանի Շրջանակների թիւը ի հարկին աւելցնել կամ պակսեցնել, նայելով այս կամ այն կէտի թուական մեծագոյն առաւելութեան կամ նուազութեան, դիրքին և ընծայած կարեւորութեան:

## ԳԼՈՒԽ Գ.

### Վարչական Մարմիններ

Յօդ. 8.— Խմբապես. — Երբոր կը կազմուի մի խումբ, նա կ'ընտրէ իր մէջէն, ձայներու մեծամասնութեամբ և գաղտնի քուէարկութեամբ, մի խմբապետ:

Յօդ. 9.— Խմբապետը խմբի անմիջական ներկայացուցիչն է Մասնաճիւղի վարչութեան մօտ: Նորա պաշտօնն է ա) կանոնաւորապէս հաւաքել խմբի անդամներէն ամսական անդամական տուրքերը և ինքնազինման վճարները և յանձնել զայնո Մասնաճիւղի Վարչութեան, ստանալով այս վերջինէն օրինաւոր ընկալագրեր, զորս նա պարտի իր ժամանակին տալ վճարող անդամներուն. բ) Մշտական կանոնաւոր յարաբերութեան կապ պահպանել խմբի և վարչութեան միջեւ, տալով ասոր հարկ եղած տեղեկութիւնները խմբի գործերու մասին և ստանալով ասկէ հարկաւոր հրահանգները իր ներկայացուցած խմբի համար. գ) կանոնաւորապէս գումարել տեղական ներքին կանոնագրութեամբ որոշուած խմբային ժողովները, զբաղուելու համար այն ամեն հարցերով, որոնք կը վերաբերին խմբին, ինչպէս նաեւ բացատրելու համար ծրագրային և կանոնական այլ և այլ սկզբունքներ, և հսկել տրուած որոշումներու անթերի գործագրութեան վրայ, այլ և կարգագրել ընկերներու մէջ պատահած անհամաձայնութիւնները. դ) կանոնաւոր արձանագրութիւն պահել տոմարներու մէջ խմբային ժողովներու,

դրամական հաշիւներու, գնուած զէնքերու և մը-թերքներու քանակութեան, ամեն տեսակ գոյքե-րու մասին, որոնք կը վելաբերին իր խմբին, և երեք ամիսը մի անդամ տեղեկագիր ներկայացնել այդ բոլորի մասին Մասնածիւղի վարչութեան։ ե) ուշի ուշով հոգել, վերջապէս, խմբի գործու-նէութեան կանոնաւոր ընթացքի և անդամներու կարգապահութեան վրայ և, ի հարկին, օգնել Մասնածիւղի վարչութեան իր խորհուրդներով՝ եթէ այդ մասին պէտք կամ ցանկութիւն կը յայտնուի անոր կողմէն։

---

### Մասնաձիւղային վարչութիւնն

Յօդ. 10.— Երբոր կը կազմուի մի Մասնածիւղ, նորա բազկացուցի՛ բոլոր խումբերը ընդհանուր ժողովի գումարուելով՝ ուղղակի և մի անդամէն կ'ընտրեն, ձայներու մեծամասնութեամբ և գաղտ-նի բուէարկութեամբ, մի վարչութիւն, բաղկա-ցած 3-5 հոգիէ, նայելով տեղական պահանջնե-րուն և յարմարութեանց։

Երկրի մէջ, ուր ընտրական այս եղանակը բազմակողմանի անյարմարութիւններ և գժուա-րութիւններ կը ներկայացնէ, Մասնածիւղային վարչութիւնը կ'ընտրուի համեմատ կը կնակ աս-տիճանի գրութեան, այսինքն, նա կ'ընտրուի ո՛չ ուղղակի և ընդհանուր անդամական ժողովով, այլ խմբապեաններէն կազմուած ժողովով, որոնք կ'ընտրեն զայն իրենց իոկ մէջէն, ձայներու մե-ծամասնութեամբ և գաղտնի բուէարկութեամբ։

Յօդ. 11.— Մասնածիւղային վարչութիւնը մի Մասնածիւղի բոլոր խումբերը ներկայացնող իշխանութիւնն է, որի ոյլ և ոյլ պարտականու-թիւններն են. ա) Մշտական սերտ կապ պահպա-նել իր ներկայացուցած Մասնածիւղի և նահան-գային կամ նրանային վարչութեան միջև. բ) Վարել անկախորէն, իր սահմանի մէջ, մնալով պատասխանատու նահանգային վարչութեան ա-ռաջ, բոլոր այն գործերը, որոնք կը վերաբերին Մասնածիւղի խումբերուն. գ) Իր գանձապահի միջոցով ստանալ խմբապեաններէն անդամական ամսական վճարները, ինքնազինումէն եկած վը-ճարները և պարբերաբար հասցնել զայնս նա-հանգային նրանի վարչութեան Գանձարանը, ստանալով այս վերջինէն պատշաճաւոր ընկալա-գրերը, զորս նա պարտի պահպանել իր մօտ ան-կորուստ. դ) Պարբերաբար հաշիւ ներկայացնել նահ. նրանի վարչութեան՝ Մասնածիւղի դրա-մական ծախքերու և տահասարակ իր գործունէ-ութեան մասին. ե) Նահանգային վարչութենէն եկած հրահանգները լրիւ և ճշգութեամբ կատա-րել, հաղորդելով անոր ինքն ալ իր կողմէն հար-կաւոր տեղեկութիւնները՝ Մասնածիւղի գործե-րու մասին. զ) Խումբերու մէջ վառ պահել հայ-րենասիրական և ապատամբական ողին. ի հարկին, իր կողմանէ պլուտագանդիսանշանակել՝ բացատ-րելու համար խմբերուն՝ Միութեանս ծրագիրը, կանոնագիրը, կեդը. վարչութենէն եկած նրան-բարականները, հրահանգները եւլն. է) Կարգա-դրել խմբերու և խմբապեաններու միջև ծագած վէճերն ու անհամաձայնութիւնները, անմիջապէս

դոհացում աալ ամեն արգար բողոքներու, գանգատներու և դիտողութեանց, հակառակ պարտգային ծանր պատասխանատութեան ենթարկուելով պաշաճաւոր իշխանութեանց կողմանէ. ը) Մասնաւոր ինամբ տանել, գաղտնապահութեան և կարելիութեան սահմաններու մէջ մընալով, զինավարժական փորձերու և առհասարակ հսկել Մասնածիւղի գործերու կանոնաւոր ընթացքի և Միութեանս նիւթական ու բարոյական զօրութեան աստիճանական զարգացման վերայ, որուն համար չխնայել ամեն կարելի ջանք՝ ծըրագրի և կանոնագրի տրամադրութիւններէն չըշեղելու պայմանաւ. թ) Մասնալ խմբապետներէն խմբերու հաշիւները և վաւերացնել զայնս:

Յօդ. 12.— Մասնածիւղային վարչութիւնը երբ միանգամ կազմուեցաւ, կ'ընտրէ իր մէջէն, ձայներու մեծամասնութեամբ և գաղմնի քուեարկութեամբ, մի Ատենապետ կամ նախագահ, մի Ատենագիր կամ Քարտուղար, մի Գանձապահ և մի Կնքապահ: Երկրի մէջ նաեւ մի Մթերապահ:

Այս պաշտօնեաներէն ամեն մէկը առանձին առանձին անմիջապէս պատասխանատու է իր գործողութեանց համար վարչութեան, իսկ վարչութիւնը ինչը անմիջապէս պատասխանատու է իր գործողութեանց համար նահանդային վարչութեան:

Յօդ. 13.— Երբ որ և է պատճառաւ վարչութիւնը կ'ուղէ հրաժարուիլ, նա այդ մասին կը զեկուցանէ ինչպէս նահանգային վարչութեան, նոյնպէս և իր խմբապետներուն: Այս վերջինները կը փութան նոր վարչութիւնը ընտրել ըստ

23րդ յօդուածի տրամադրութեան, սակայն մինչեւ նոր վարչութեան ընտրուիլն ու գործերու վարչութիւնը ձեռք առնելը՝ հին վարչութիւնը պարտի շարունակել ընթացիկ գործերը, հակառակ պարագային պատասխանատու մնալով նահակային վարչութեան առաջ:

Յօդ. 14.— Եթէ այլեւայլ պատճառներով վարչութիւնը զրկուի իր անդամներու մէկէն կամ երկուսէն, և կամ կորսնցնելով իր մեծամասնութիւնը՝ կազմալուծման ենթարկուի, պաշտօնի վրայ մնացողները պարտաւոր են զեկուցանել այդ մասին նահանգային վարչութեան, ինչպէս նաեւ իրենց խմբապետներուն: Այս վերջինները կը փութան լրացնել բացակաները մասնակի ընտրութեամբ՝ եթէ կազմալուծում չկայ, ամբողջական ընտրութեամբ՝ եթէ կազմալուծում կայ, ըստ 23րդ յօդուածի:

Յօդ. 15.— Եթէ կազմալուծումէն յետոյ անմիջապէս հնարաւոր շգառնայ հանգամանքներու բերմամբ ընտրական գործողութեամբ օրինաւոր վարչութիւն հաստատել՝ այդ պարագային նահանգային վարչութիւնը կը նշանակէ իր կողմանէ մէկը, որպէս ներկայացուցիչ, որ կը վարէ Մասնածիւղի գործերը, մինչեւ կարելի լինի օրինաւոր Մասնածիւղային վարչութիւն ընտրել:

Նահանգային կամ Շրջանային վարչութիւն

Յօդ. 16.— Երբոր կը կազմուի մի նահանգային Շրջանակ, նորա բաղկացուցիչ Մասնա

Ճիւղերը կ'ընտրեն, Երջանակի գործերը վարելու համար, մի Նահանգային կամ Երջանոյին վարչութիւն, բաղկացած Յ-7 հոգիէ, նայելով տեղական պահանջներուն և կարելիութեանց:

Յօդ. 17:— Նահանգային կամ Երջանային վարչութիւնը կ'ընտրուի Նահանգի կամ Երջանի Մասնաճիւղերու կողմանէ ուղարկուած մի մի պատգամաւորներու ժողովէն, որ կը կոչուի Նահանգային կամ Երջանային Պատգամաւորական ժողով, գաղտնի բուէարկութեամբ և ձայներու մեծամասնութեամբ։ Երջանային Պատգամաւորական ժողովը կ'որոշէ նմանապէս Նահանգային վարչութեան նստավայրը Երկրի մէջ Նահանգային վարչութիւնը կը կազմուի ըստ տեղական ներքին կանոնագրի։

Յօդ. 18:— Նահ. կամ Երջ. վարչութիւնը Նահանգային Մասնաճիւղերու անմիջական ներկայացուցիչ իշխանութիւնն է։ Նորա պարտականութիւններն են. ա) Վարել անկախորէն իր Նահանգային սահմաններու մէջ այն բոլոր գործերը, որոնք ունին զուտ Նահանգային տեղական բնաւորութիւն և չեն դիպչիր այնպիսի հարցերու, որոնք ընդհանուր բնուորութիւն ունենալով՝ կը վերաբերին կեդր. վարչութեան իրաւասութեան. բ) Մշտական սերտ յարաբերութեան մէջ լինել կեդր. վարչութեան հետ, ստանալով անկէ հարհանգներ, կարգադրութիւններ, պատուէրներ ևն. և տալով անոր, փոխադարձարար, ամեն հարկաւոր տեղեկութիւններ գործի վերաբերեալ ինքնաբերաբար կամ նորա հրամանին. գ) Ունենալ կանոնաւոր կապ ուրիշ Նահանգային վարչու-

թեանց հետ և կատարել նոցա հետ խորհրդակցութիւն գործերու մասին. դ) Հոգ տանիիլ ամեն կերպ կանոնաւոր վիճակի մէջ պահելու համար նահանգային գործերը, ամեն կէտի վրայ վառպահելու համար հայրենասուիրական և ապստամբական ոգին, ուեկի ու աւելի զարգացնելու համար Միութեանս զօրութիւնը եւլն. ե) Քննել ու վաւերացնել Մասնաճիւղերու հաշիւները և նոցա գործունէութիւնը, լուծել ապօրինի կազմութիւնները և հրամայել նոր վարչական օրինաւոր ընտրութիւն. զ) Պարբերաբար և ամեն անգամ, երբ կեդրոնը պահանջ կը ներկայացնէ, ճշգրիտ և գիտական տեղեկագրեր և վիճակագրեր ուղարկել կեդր. վարչութեան՝ Նահանգային ընդհանուր վիճակի, գործունէութեան և դրամական հաշիւներու վերաբերեալ. է) Պարբերաբար և կանոնաւորապէսզանձել Մասնաճիւղերէն, տալով պատշաճաւոր ընկալագրեր, անդումական, ինքնազինման և ամեն կարգի գրամական հասոյթներ, ուղարկել կեդր. Գանձալանը կանոնաւորապէս 0/0 ին 30ը՝ ըստ ծրագրի տրամադրութեան, և գործածելով մնացածը ամեն կարգի տեղական և ընդհանուր պէտքերու վրայ։

Յօդ. 19:— Նահանգային վարչութիւնը իր բոլոր ործերու համար ուղղակի պատասխանատու է կեդր. վարչութեան։

Յօդ. 20:— Երբ մի անգամ կազմուեցաւ Նահանգային վարչութիւն, նո իր մէջէն կ'ընտրէ ձայնի մեծամասնութեամբ և գաղտնի քուէարկութեամբ մի Ատենապետ կամ Նախագահ, մի Ատենագլիր կամ Քարոզուղար, մի Գանձապահ և

մի կնքապահ։ Երկրի մէջ նաեւ մի Մթերապահ։

Այս պաշտօնեաներուն ամեն մէկը առանձին առանձին եւ անմիջապէս պատասխանատու է իր գործողութեանց համար նահանգային վարչութեան, որ իր կարդին պատասխանատու է հաւաքարար կեդր. վարչութեան։

Յօդ. 21.— Տեղական ներքին մի կանոնագրութիւն կը գծէ, ինչպէս Մասնաճիւղային վարչութեան, նոյնպէս եւ նաև վարչութեան ամեն մի պաշտօնէի գործողութեանց սահմանները։

Յօդ. 22.— Երբ որ եւ է պատճառաւ նաև վարչութիւնը կ'ուզէ հրաժարուիլ, նա այդ մասին պարտաւոր է զեկուցանել կեդր. վարչութեան, ինչպէս նաեւ Մասնաճիւղերու վարչութեանց, որոնք կը փութան նոր վարչութիւն ընտրել ըստ 33րդ յօդուածի տրամադրութեան։

Յօդ. 23.— Եթէ որ և է պատճառավ վարչութեան անդամներէն մէկ կամ մէկրանին պակասին, առանց կազմականան ենթարկելու մարմինը, այդ պարագային պակասած անդամներու տեղը կը լրացուի համաձայն 33րդ յօդուածի տրամադրութեան։

Յօդ. 24.— Եթէ պակասավ անդամներու թիւը մեծնալով կազմականաւ յառաջ գայ Մարմի, այսինքն սա իր մեծամասնութիւնը կորսնցնէ, այդ պարագային, պաշտօնի վրայ մնացողները պարտաւոր են անմիջապէս զեկուցանել այդ իրողութեան մասին մէկ կողմէ՝ կեդր. վարչութեան, միւս կողմէ՝ Մասնաճիւղերու վարչութեանց։ Այս վերջինները անմիջապէս կը ձեռնարկեն նոր ընտրութեան, ըստ 33րդ յօդուածի։ մինչև նոր վար-

չութեան ընտրութիւն, սակայն, և պաշտօնի անցնիլը, նորա պարտաւոր են շարունակել ընթացիկ գործերը։

Իսկ եթէ կազմալուծումէն անմիջապէս յետոյ հանգամանքներու աննպաստ ըերումով հնարաւոր չգառնայ օրինաւոր նահ. վարչական ընտրութիւն կատարել, այդ պարագային, կեդր. վարչութիւնը կը նշանակէ իր կողմանէ մէկը, որպէս ներկայացուցիչ, որ կը վարէ նահանգային գործերը, մինչեւ կարելի լինի օրինաւոր նահանգային վարչական ընտրութիւն կատարել։

### Կեդրունական վարչութիւն

Յօդ. 25.— Կեդր. վարչութիւնը ընդհանուր կազմակերպութեան ներկայացուցիչ իշխանութիւնն է, որ ունի միանդամայն գործադիր եւ օրենսդիր հանգամանք, ի բացակայութեան Ընդհ. Պատգամաւորական ժողովոյ։ Նա կ'ընտրուի Ընդհ. Պատգմ. ժողովէն՝ ձայններու մեծամասնութեամբ և գալանի ըստ էարկութեամբ, և կը բազկանայ 3-5 հոգիէ։

Յօդ. 26.— Կեդր. վարչութիւնը պաշտօն եւ պարտականութիւն ունի. ա) Վարելու Յեղափոխական-Ազստամբական Գործի վերին տեսչութիւնը և հոկելու ընդհանուր գործունէութիւնն ներդաշնակութեան վրայ. բ) Պահպանելու նահանգային վարչութեանց հետ մշտական կանոնաւոր յարաբերութիւն. գ) Ներքին գաղտնի նրաբերականներով տալու ձրագրային և կանոնական հար-

յերու մասին մեկնութիւններ, ինչպէս նաև հարկաւոր պատուէրներ, հրահանգներ, կարգադրութիւններ և տեղեկութիւններ. դ) Քննելու և հաստատելու նահ. վարչութեանց տեղական ներքին կանոնագրերը, մշտապէս վառ պահելու անոնց մէջ հայրենասիրական և ապատամբական ոգին, յորգորելու զանոնք գէպի ժրածան զործունէութիւնը, անձնութիւնը, պարագանելով ի հարկին, նաև յասուկ առաքեալներ, բնելու անոնց մէջ ծագած վէճերն ու անհամաձայնութիւնները և տնօրինելու պարտ ու պատշաճը, ընելու նոցա զործունէութիւնն ու գրամական հաշիւները և փաւերացնելու զայնս, բեկանելու ապօրինի կազմութիւնները եւլն. ե) Ի իարկին, կատարելու յարաբերութիւններ Միութենէն գուրս զործող խումբերու կամ մարմիններու հետ, առանց վրանգելու իր գիրը. զ) Նախանձախնդիր աշբերով հետեւելու ծրագրի, կանոնագրի, հաստատուած օրէնքներու և տրուած հրահանգներու ճրշգրիս գործադրութեան. է) Ստանալու նրջանակներէն ուղարկուած գրամները. ը) Հսկելու ապրատամբական ուժի կանոնաւոր պատրաստութեան վրայ և որոշելու ապատամբութեան յորմար լուպէն և եղանակը. թ) Աչալուրջ կերպով հետեւելու բաղարական ամեն գարձուածքներու և գէպը բերու, կշռելու համար հանգամանքներու նպաստու կամ աննպաստ լինելը ապստամբական շարժութեներու տեսակէտով. ժ) Ի նկատի ունենալու, նաև, շրջապատող ցեղերու թշնամական կամ բարեկամական տրամադրութիւնները, զգուշանա-

լու ամեն վաղաժամ և անհետեւանք ձեռնարկներէ, որոնք կարող են կասեցնել ապստամբական ուժի պատրաստութեան կանոնաւոր զործողութիւնը և վանակել բուն իսկ Գործի պաշտայ յաջողութիւնը. ժա) Ապստամբական բոպէն որոշելէ առաջ՝ խորհրդակցութիւն կատարելու երկրի նահանգային նրջաններու Վարչութեանց հետ, միշտ պահելով իր ինքնիշխանութիւնը իր որոշումներու մէջ, և ունենալու նահանգային վարչութեանց բազմակողմանի կերպով ուսումնասիրւած տեղեկագրերը, հիմնուած ծագրիտ փաստերու վրայ. ժբ) Ներկայացնելու Ընդհ. Պատգմ. ժողովին, որուն նա ուղղակի պատասխանատու է, իր ընդհանուր գործունէութեան և գրամական ծախքերու հաշիւները:

Յօդ. 27.— Կեդրոնական վարչութիւնը ի՞նքը կը նաւրէ իր մէջն իր Ատենապետը կամ նախագահը, իր Ատենադպիրը կամ Քարտուղարը, որոնց իւրաքանչւրը առանձին առանձին պատասխանատու է իր գործողութեանց համար անմիջապէս և ուղղակի կեդրավար կամ կատարելու նար կեդրոնական, իսկ հաւաքարար ամենքը միասին, Ընդհ. Պատգմ. ժողովին:

Յօդ. 28.— Եթէ կեդր. վարչութիւնը որ և է պատճառով ուղէ հրաժարուիլ պաշտօնէ, նա այդ մասին պարտաւոր է զեկուցանել նահանգային վարչութեանց եւ շարաւնակել ընթացիկ գործերու վարչութիւնը, մինչեւ այս վերջինները Ընդհ. Պատգմ. ժողով գումարելով՝ ընտրեն նոր կեդրոնական պատճառութեան մէկ կամ եր-

Յօդ. 29.— Այն պարագային, երբ կեդր. վարչութեան անդամներէն կը պակասին մէկ կամ եր-

կու հոգի, մնացածները պէտք է լրացնեն օրինական թիւը, ենթագրելով որ սա եղած լինի 5, հետեւեալ կերպով. նորա կը ներկայացնեն նըրջանային վարչութեանց ընտրուելիք անդամներու համար երկպատիկ յանկ, որմէ նըրջանային վարչութիւնները կ'ընտրեն ձայներու մեծամասնութեամբ պակասած անդամներու փոխարէն եթէ պատահի սակայն որ ո և է պատճառով ընտրական այս եղանակով դրական արդիւնք ձեռք չը բերուի՝ այն ժամանակ կեդր. վարչութեան մնացած անդամներուն կը մնայ ընտրել կազմակերպութեան մէջէն, ձայներու մեծամասնութեամբ, իրենց յարմար գտածած անձերը և տալ այդ մասին գիտութիւն նըրջանային վարչութեանց: Իսկ եթէ մեծամասնութիւնն է որ կը պակասի, այդ պարագային կեդրոնը կը համարուի լուծուած և կ'առաջարկուի նոր ընտրութիւն համաձայն ըստորև գրուած 55րդ յօդուածին:

Յօդ. 30.— Միայն Բնդհ. Պատգմ: ժողովը կ'որոշէ թէ կեդր. վարչութիւնը քանի՛ անդամէ բաղկանալու է:

Յօդ. 31.— կեդր. վարչութեան անդամներուն անձնական ծախքերը պարտին հոգացուիլ կազմակերպութեան կողմանէ՝ եթէ անկարելիութիւն յառաջանայ նոցա՝ կեդրոնավայրի մէջ գտնել անձնական կից զբաղմունք, հոգալու համար այդ ծախքերը ամբողջութեամբ կամ մասամբ, առանց սակայն, վնաս բերելու յեղափոխական գործերուն: Բնդհ. Պատգմ: ժողովին կը պատկանի որոշել անձնական ծախքերու մի չափ:

Յօդ. 32.— կեդր. վարչութեան անդամները

հաւասար ձայն ունին որոշումներու մէջ եւ են վերընարելի:

Յօդ. 33.— կեդր. վարչութիւնը ոչ մի ձայն չունի Բնդհ. Պատգմ: ժողովին մէջ, որուն նա համարատու է:

Յօդ. 34.— կեդր. վարչութեան անդամները կարող են ընտրուիլ որպէս պատգամաւոր Բնդհ. Պատգմ: ժողովին մէջ, սակայն նորա ձեռնպահ կը մնան ամեն անդամ որ խնդիրը կը վերաբերի կեդրունի գործունէութեան և նորա հաշիւներու ըննութեան:

Յօդ. 35.— կեդր. վարչութիւնը եռամեայ տեսողութիւն ունի, ի բաց առեալ բացառիկ հանգամանքներ, որոնք կը հարկադրեն Բնդհ. Պատգ. ժողովոյ գումարում, որ պարագային նա կը գտարի:

Յօդ. 36.— Ամեն անդամ որ կեդրոնը իր կողմանէ կ'ուղարկէ մի պաշտօնեայ կամ «առաքեալ» պրօպագանդայի և կամ ուրիշ ո և է յեղափոխական նպատակով, պարտի հոգալ նորա ծախքերը, որոնք կը գագարին պաշտօնի գագարման հետ

### Բնդհանուք Պատգամաշորական ժողով

Յօդ. 37.— Բնդհ. Պատգմ: ժողովը Միութեանս գերազոյն օրէնսդիր իշխանութիւնն է, որ կը կազմուի նահանգային նըրջանակներու կողմանէ ուղարկուած մի մի ներկայացուցիչ պատգամաւորներէ:

Յօդ. 38.— Նահանգային վարչութիւնները

իրենք կ'ընտրեն պատգամաւորը իրենց մէջէն կամ իրենց պատկանեալ շրջանակէն:

Յօդ. 39.— Ընդհ. Պատգմ. ժողովի մէջ պատգամաւորները ունին միմեանց համահաւասար ձայն:

Յօդ. 40.— Երբ ո և է առթիւ կը գումարուի Ընդհ. Պատգմ. ժողով, անմիջապէս կը դադարի գործող կեդր. վարչութեան իշխանութիւնը, որը ի գործ կը դնէ ի՞նքը, Ընդհ. Պատգմ. ժողովը, ամբողջութեամբ կամ իրմէ ընտրուած առժամանակեայ Յանձնախմբի միջոցաւ, մինչեւ իր նիստերի դադարիլը և նոր կեդր. վարչութեան կազմուիլը:

Ոյնու ամենայնիւ, եթէ կեդր. վարչութիւնը ի՞նքն է որ, որ ո և է արտաքոյ կարգի պատճառով, հարկ կը դատէ Ընդհ. Պատգմ. ժողով գումարել, երբ տակաւին լրացած չէ իր պաշտօնի տեւողութեան կանոնական ժամանակամիջոցը, և եթէ չկայ որ ո և է պարագայ կեդր. վարչութեան նոր ընալութեան, այդ պարագային, գործող կեդր. վարչութեան իշխանութիւնը չի դադարիր, այլ կը մնայ շարունակելի, մինչև կանոնական եռամեայ ժամանակամիջոցի լրանալը:

Յօդ. 41.— Ընդհ. Պատգմ. ժողով կը գումարուի կանոնաւորապէս երեք տարին մի անգամ:

Ընդ. Պատգմ. ժողով կը գումարուի նաև բացաւիկ հագամանըներու մէջ կեդր. վարչութեան հրաւիրմամբ, երբ սա որ ո և պատճառով ուզէ հրաժարիլ իր պաշտօնէն, կամ ենթարկուի կազմալոյժ վիճակի:

Յօդ. 42.— Ընդհ. Պատգմ. ժողով կը գումար-

ուի, նաև երբ Նահանգային Շրջաններու մեծամասնութեան կողմանէ պահանջ գրուի կեդրոնի առաջ. այս պարագային վերջինու պարտաւոր է անմիջապէս ձեռնարկել նորա գումարման:

Ինչ պարագայի մէջ ալ որ լինի, կեդր. վարչութիւնն է՝ որ պաշտօնապէս կը հրաւիրէ Ընդհ. Պատգմ. ժողովը:

Յօդ. 43.— Որ ո և է Ընդհ. Պատգմ. ժողով, որ կը գումարուի յանուն Միութեանս արտաքոյ վերոգրեալ սահմաններուն, չի համարուիր օրինաւոր. Օրինաւոր չէ նմանապէս Ընդհ. Պատգմ. ժողովը, եթէ ներկայ չէ նաև Շրջաններու մեծամասնութիւնը կամ առանձին պատգամաւորի միջոցաւ և կամ յանձնուած ձայնով:

Յօդ. 44.— Մի պատգամաւոր չէ կարող երկու ձայնէ աւելի ունենալ:

Յօդ. 45.— Ընդհ. Պատգմ. ժողովի որոշումները կը տրուին ձայներու մեծամասնութեամբ և պարտաւորիչ են բոլոր շրջանակներու համար, առանց բացառութեան:

Յօդ. 46.— Ընդհ. Պատգմ. ժողովի պաշտօննէ. ա) Ստանալ կեդրոնի ընդհանուր գործունէութեան եւ գրամական ծախուց հաշուետութիւնը. բ) Ընտրել նոր կեդր. վարչութիւն. գ) Սահմանել օրինական նոր կարգեր, կատարել ծրագրային բարեփոխումներ՝ եթէ հարկ կայ, եւ, առհասարակ, անել այն ամենը, ինչ որ ժամանակի և զործի պահանջները կը թելադրեն, առանց սակայն գիպշելու Միութեանս հիմնական նպատակին, որ անփոփոխելի է:

Յօդ. 47.— Ընդհ. Պատգմ. ժողովի իր գիւանի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՎԱԿՈՒՄ

միջոցով պարտաւոր է արձանագրել կանոնաւոր տոմարներու մէջ իր բոլոր նիստերը և տուած որոշումները, զորս նա կը յանձնէ կեդրոնին ի պահ կազմակերպութեան արխիվին մէջ:

Յօդ. 48.— Պատգամաւորները իրենց պաշտօնի բոլոր տեւողութեան միջոցին իրենց անձնական ծախքերը կ'ստանան ամեն մէկը այն շրջանակէն, որի կողմանէ նա նշանակուած է:

Յօդ. 49.— Ընդհ. Պատգմ. ժողովը պարտի ունենալ, ինչպէս ամեն ժողով, իր ներքին կանոնագիրը, որի համեմատ կը կատարուին նիստերը և կը տրուին որոշումները:

### Ներկայացուցիչ

Յօդ. 50.— Ներկայացուցիչը կեդր. վարչութեան կողմանէ նահանգային վարչութեանց եւ Մասնաճիւղերու մօտ ուղարկուած առաքեալն է կամ պաշտօնեան, առժամանակեայ կամ մնայուն հանգամանքով, նայելով ժամանակի և հանգամանքներու պահանջման:

Յօդ. 51.— Կեդր. վարչութեան ներկայացուցչի պաշտօնն է. ա) Վերահսկել նահանգային և Մասնաճիւղային վարչութեանց այլեայլ գործողութեանց վերայ, ծրագրային և կանոնագրական տրամադրութեանց և կեդր. վարչութեան կողմանէ տրուած հրահանգներու և եղած կարգադրութեանց ձշիւ գործադրութեան վրայ, և առ հասարակ, գործերու կանոնաւոր ընթացքի վրայ,

և առաջ բոլորի մասին ճշգրիտ և կանոնաւոր տեղեկութիւն ու հաշիւ կեդր. վարչութեան. բ) Գաղտնի պրօպագանդա կատարել իր ուղարկուած վայրերու մէջ կազմակերպական տեսակէտով, օգնելով նաև այդ գործի մէջ, ամեն անդամ որ պահանջ գրուի իր առաջ, տեղական նահանգային և Մասնաճիւղային վարչութեանց, վերացնել շարքերու մէջ պատահաբար առաջ եկող խոռոշութիւններն ու երկպառակութիւնները և ամեն կերպով հոգ տանիլ կազմակերպութեան զօրութեան աճմանն ու հաստատութեան, ինչպէս նաև սշտապէս վառ պահել Միութեանս հետեւողներուն մէջ հայրենասիրական և ապստամբական ոգին:

Յօդ. 52.— Ներկայացուցիչը կարող է ներկայ գտնուիլ նահանգային վարչութեանց նիստերուն կամ ինքնարերաբար, կամ նոցա հրաւիրման վերայ, աակայն տրուած որոշմանց մէջ ունի միայն խորհրդատուական ձայն և կը հսկէ ժողովներու օրինաւորութեան վրայ:

Յօդ. 53.— Ներկայացուցիչը, կեդրոնի հրահանգով, կարող է լուծել մի վարչութիւն՝ եթէ սորա կազմութիւնը ապօրինի յայտնուի, և ձեռնարկել նոր վարչութեան ընտրութեան:

Յօդ. 54.— Ներկայացուցիչը իր գործողութեանց համար անմիջապէս և ուղղակի պատասխանատու է կեդր. վարչութեան և կը գործէ ու կը շարժի նորա հրամաններու ու հրահանգներու համեմատ:

Յօդ. 55.— Ներկայացուցիչի ծախքերը կը հսկացուին կեդր. Գանձարանէն, այդ ծախքերը կը դադարին նորա պաշտօնի դադարման հետ. Այ-

նու ամենայնիւ, եթէ ներկայացուցիչը մնայուն  
հանգամանք ունի և եթէ հնարաւորութիւն կայ՝  
նա պրատառը է իրեն համար վնասութ անձնա-  
կան գործ, որով կարենայ հոգալ իր անձնական  
ծախքերը, առանց վնասութ իր պաշտօնի կի-  
րառման:

Յօդ. 56.— Նահանգային վարչութիւնները,  
ի հարկին, կարող են իրենց Երջանի գործերը  
կարգադրելու նպատակաւ, իրենց կողմանէ հա-  
նել ժամանակաւոր շրջուն գործիչներ կամ պրօ-  
պագանդիստներ իրենց սահմանի մէջ, զնելով  
սակայն, կեդրոնի առաջ այդ հանման պատճա-  
ռաբանուած անհրաժեշտութիւնը:

Յօդ. 57.— Նահանգային վարչութեանց կող-  
մէ հանուած գործիչները միայն ժամանակաւոր  
են և ոչ մնայուն, որոնք նաեւ կստանան իրենց  
ծախքերը, իրենց պաշտօնի բոլոր տեւողութեան  
միջոցին, Նահանգային վարչութեան Գանձարա-  
նէն:

Յօդ. 58.— Նահանգային գործիչները Մաս-  
նաճիւղերու վարչութեանց նիստերուն կարող են  
մասնակցիլ միայն խորհրդատական ձայնով:

→→•••←←←←

## ԳԼՈՒԽ Է.


Համակիր անդամներ

Յօդ. 83.— Համակիր կամ Քաջալերող Ան-  
դամները անոնք են, որոնք առանց ենթարկուե-  
լու կանոնագրի տրամադրութեանց, յօժարակամ  
կը մասնակցին Միութեանս՝ օգնելով անոր թէ  
բարոյապէս և թէ նիւթապէս. բարոյապէս՝ իրենց  
խորհաւրդներով և քաջալերութեամբ, նիւթապէս՝  
իրենց ամսական անդամակարներով, զէնքով  
կամ զէնքի փոխարէնով, ամեն կարգի ուղղմամբ-  
թերով, կերակրի պաշտօվ, ամեն տեսակ ան-  
հրաժեշտ գործիքներով և իրեղէններով և, վեր-  
ջապէս, գրամական նուէրներով:

Յօդ. 84.— Համակիր անդամները նոյնպէս կա-  
րող են կազմել խումբեր «Համակիր խումբեր»  
անուան տակ և գտնուիլ յարաբերութեան մէջ  
Միութեան հետ կամ գործօն խմբերու խմբագետ-  
ներու միջոցաւ և կամ ուղղակի Մասնաճիւղի  
վարչութեան միջոցաւ, նայելով տեղական յար-  
մարութեանց:

Յօդ. 85.— Իգական սեռի պատկանող ան-  
հատներ նոյնպէս կարող են աջակցիլ Միութեանս,  
որպէս լոկ համակիրներ, ինչպէս կը տրամադրէ  
ծրագիրը, իրենց ամեն կարգի բարոյական և նիւ-  
թական աջակցութեամբ, կազմելով ուրոյն խում-  
բեր, որոնք կը կոչուին «Կանանց համակիր խում-  
բեր», և գտնուելով Միութեանս հետ յարաբերու-  
թեան մէջ, ըստ տրամադրութեան 84րդ յօդուածի:







104. MB

gr - 0



Znt

2314

2013

